

ՀԵՏԱԽՈՒԻԶՈՒԹԻՒՆՔ

ՕՍՐՈՒՆԷ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ

ՅԱՓՐԷԴԵԱՅ ՅՈՆ ԳՈՒՏԵՄԴԻ

Ի ԹՂԹԱԿԻՑ ԱՆԴԱՄԷ ՃԵՄԱՐԱՆԻՆ ՊԵՏԵՐՐՈՒՐԳԻ

(Հրատարակեալ 'ի *Mémoires de l'Académie des Sciences de S. Pétersbourg, VII^e série, Tome XXXV, n.° 1. S. Pétersbourg, 1887*).

ՀԱՄԱՌՕՏ ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ

ԱՊՐԷՏ ՅՈՆ ԳՈՒՏԵՄԴԻ ՎԱՐՈՒՑ ՎՐԱՅ



Մայ բանասիրաց ներկայացնելով Ա. Յոն Գուաշլիգ գերմանացի պատմագրանի առաջինայ նշանաւոր և հիմնական հետախուզութիւնն արեւելեան պատմագրութեան մի ձեւովն որ Հայոց պատմութեան հետ սեղան կայ ունի, և որոյ լուսարանութիւնն և հայկական պատմագրութեան կնճառս խնդիրներէն մին կը լուծէ, աւելորդ չեմ համարիր քանի մի խօսք ևս հեղինակին վրայ ասելու, որոյ վաղաճամ մահուամբ պատմական գիտութիւնն և 'ի մասնաւորի աւելելեան պատմագրութիւնն անգաւնայի կորուստ մի ունեցաւ: Ա. Յոն Գուաշլիգ ծնու 'ի 1 յուլիսի 1831 'ի Լոշլից Դրէզդէնի մոտ՝ Սուբսնական ազնիւ յեղէ: Արդէն իւր մանկութեան և պատանեկութեան հասակին մէջ ուսուցչաց զարմնք պատճառած էր տարօրինակ ընդունակութեամբ և աշխատասիրութեամբ: Տասն և եօթն տարեկան հասակով համալսարան մանկելով՝ ընտրեց իրեն իբրև մասնաձեւ ուսումնասիրութեան դասական լիզոնաբանդիրն (Classice philologie) և պատմութիւն: Իսկ 1854 առաւ ֆիլիսոփայութեան վարդապետի աստիճանն 'ի Լոյպցիգ: Այս առթիւ գրած աշխատութիւնն, «*De rerum Aegyptiarum scriptoribus Graecis ante Alexandrum Magnum*» ուղեցոյց է իւր ազգայ գիտնական հետախուզութեանց: Քանի մի տարի իբրև աստիճանական

գիտնական անցնելէ վերջն, ընտրուեցաւ 1861 անգամ Սարսնական գիտութեանց ընկերութեան, իսկ 1863 առանց իսկ իբրև ուսուցիչ որ և է համալսարանում հաստատուելով՝ կուսուցաւ Կիլ քաղաքի համալսարանն իբրև ուսուցչական պատմութեան: 1873ին տեղափոխուեցաւ ի Կէտիգորէրգ, իսկ անտի 1876ին Ենայի համալսարանն, ուստի 1877ին 'ի Տիւրինգէն, ուր մինչ ց՛ մարտի 1887 կ'ուսուցանէր, երբ անողտակի կերպիւ կոկորդային ցառով մի յունկարծակի վտիճանեցաւ, ի մեծ սուգ իւր բարեկամաց և աշակերտաց, որոց մեծ մեծ յոյսերն իւր անշափ գիտութենէ օգտուելու ի գերև ելաւ: Գուաշլիգ գրեթէ անմտնօթ է մեծ հասարակութեան վասն զի ինքն ժամանակիս գիրք շինող գիտնականներէ չէր. սակայն իւր մասնութեան գիտնականներէն շատ յարգուած և լուսնաշուքած էր: Իւր անունն այն ժամանակ տարածուեցաւ, երբ ասորբաններու կիս գիտուն (dilettant) և անհաստատ հետազոտութեանց պլլ ևս գիտնալ անկարող լինելով իր սարքնադատութիւն մի գրեց *Beitraege zur Geschichte des alten Orients I. 1868 & II. 1876*. որով պատմական գիտութեան խանգարման առաջն առաւ, և այդ նոր գիտութեան աշակերտաց հաստատ ուղղութիւն մի բանել ստիպեց: Իւր մեացած աշխատութիւններն ևս ըստ մեծի մասին քննադատական են, որոյ համար առանձին սէր և մեծ կարողութիւն ունէր՝ Հին ազգաց

Յունաց Լուովմէսացոց լեզուին և պատմագիր-
ներու անմիջական և լիակատար ծանօթութեամբ
և նոր ազգացը շատեցողն լեզուին և պատմութեան
թէ անմիջական և թէ միջնորդական ծանօթու-
թեամբ՝ զիտութեան անհոռն սղաշար ժողոված
էր, որ պատմական գրուած մի քննադատելու չա-
մար անհրաժեշտ է և Նայկական պատմութիւնն ի-
րեն առանձինն սերը գրուած էր. սողելիս գը-
րողն սեռած է նորա մտ սեպակի մի հայկական
պատմութեան, որ Քուաշմիդ գեւ ևս իւր վար-
ժարանն եղած ժամանակ Լրվայլանն քաղած
էր, երևոյթ մի՝ որ օտար գերմանացու տութիւ
տարօրինակ կարելի է ճամբել, ժամանակի
այնոյնի ժամանակի մի մէջ, երբ մեր ճաշային-
ներէ շատելն իսկ այգպիսի փափագ չէն ցոյց
սար իրենց ազգին պատմութիւնն ուսանելու,
թէ և այսպէս անուանեալ ազգոյրանցի դարոյ
մէջ կ'ապրինք: Բարեբախտաբար տեսնք և այդ
նուառնասերութեանց արգիւնքն. հայ բանա-
սէրներն իզ յիշեն անշուշտ Քուաշմիդի Թորենա-
ցոյ և Ագթաթանդեզոսի քննադատութիւնք: Սա

կայն այդ՝ միշտ փոքրիկ մասն մի է իւր անբա-
ւելի զիտութեան, որ առանց որ և է երկնեղի
իւր աշակերտաց կը բաժանէր, որոց սուգն իւր
սարքածաւ մասնու մտայ վրայ որդ առաւել ևս կը
մեծանայ: Վասն զի նա հաստատուն ձեռքով
իրենց միշտ կ'առաջնորդէր, մինչև անդամ տա-
րիներ անցնելէ վերջն, իւր աշակերտք իրեն կը
գիմեին գժուար ինգիլիսիւրի լուծման համար,
և նա աննախանձ կերպիւս կը հաղորդէր իր գիտ-
ցածն, և կամ եթէ ինգիլիսի իրեն համար ևս նոր
էր, կ'ուսուցնասիրէր շարթմներով և արգիւն-
քն առանց նախանձու հարցնողին կը հաղորդէր
Քուաշմիդ ունեցած է և քանի մի հայ աշակերտ-
ներ, որոց առանձինն սեր կը ցուցնէր միշտ-
յուսանք որ այդ աշակերտներն արժանաւոր
յաջորդներ լինին իւրեանց ուսուցչին և նորա
մտցուցած քննական սճով մեր ազգին անցնալն
պարզեն, որով իւրաքանչիւր հայ ըստ իւր նախն-
նական սովորութեան սօրհնութեամբ եղցի
յիշատակն արգարոց՝ ասելով՝ երախտահատաց
կը լինի և նոցա ուսուցչին:

Մ Ա Տ Ե Ն Ս Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

R. Reincciuss, Historia Julia, III.
(Halmstädt 1597, fol.) p. 280-284. (Ա-
մենահին, և կատարելագոյն ժողովածու
աղբիւրները)

J. S. Assemanus, Bibliotheca Ori-
entalis, I. (Rom 1719, fol.) p. 417-423.
(Այս է առաջին հրատարակութիւն գա-
ւաղանակրին թագաւորաց Գիւնիսիոս
Տէլլ-Մահրէցոյ հանդերձ գիտնական
մեկնութեամբ, որ հարկաւ մի սխալի,
երբ ժամանակագրին տարեգրական
հակասութիւններն թուերու փոփոխու-
թեամբ բառնալ կ'աշխատի):

Th. S. Bayer, Historia Osrhoëna
et Edessena e numis illustrata, Peter-
sburg 1734, 4 p. 32 - 207. (Ճապար և
առանց քննադատութեան. — իւր գիւ-
տըն է նոյնպէս և այն թէ Արգար ա-
նունն ընդհանուր անուն է հարստու-
թեան և ոչ անհատներու, որով Գիւնի-
սիոսի և դասական մատենագիրներու
մէջ եղած հակասութիւնն բառնալ
ուզած է: Սակայն իբրև հարուստ ժո-
ղովածու նիւթոց դեռ մինչև ցայսօր
իսկ գործադրելի զիւրք մի է, հարկաւ

իւրոց առեալ դրամագիտական բաժի-
նըն):

F. r. Wise, Nummorum antiquorum
scrinis Bodlejanis reconditarum cata-
logus, Oxford 1750, fol. Epistola ad v.
cl. Joannum Masson de nummo Abgari
regis, p. 299-310. (Եղբայր թագաւո-
րութեան վերջին ժամանակներու վրայ
այնպիսի քննական սճով կը գրէ՝ որ
չնայելով իսկ մատենագրիս ժամանա-
կին՝ կատարեալ հուանութեան ար-
ժան է):

J. Eckhel, Doctrina nummorum vete-
rerum, III (Wien 1794, 4, p. 511-517.
(Չնայելով իւր ժամանակուան նիւթի
անկատար ժողովածուին, հիմնական
գործ է նոյնպէս եղեսակական դրամագի-
տութեան համար):

E. Q. Visconti, Iconographie Grec-
que, Paris 1808, fol. N, Ausg. ¹ III (Mei-
land 1826, 6) p. 45-57. F. II, 4- 12.
(Բուն դրամագիտական մասին մէջ այս-
տեղ պակաս հմտութեամբ կը գրէ քան
այլուր, բայց իւր պատմական բացա-
տրութիւններն օգտակար են):

F. E. Mionnet, Description de médailles antiques. (Paris 1811, 8) p. 613-625. Supplément VIII (Paris 1837, 8) p. 409-414. (Ամենակատարեալ ցանկ գրամետրի. գրեթէ առանց բացառութեան Cabinet de Franceի և ապագրուած մատենագրութեան հիման վրայ կազմած. Վիսկոնտիի սխալներն ուղղած են աստ, իսկ ինչ որ supplémentին մէջ նոր յուելուած է, առնուած է Sestiniի Descrizione delle medaglie del Museo Hedervariano, սւտի պարտ կը համարիմ գրու շտյնել) :

Ch. Lenormant, Trésor de numismatique et de glyptique. Numismatique des rois Grecs (Paris, 1849, fol), p. 130-134. Pl. LXII, 8-18, LXIII, 1-15. (Փռ բագրութեամբ տպագրուած գրամետրըն տալիս են առ երեւոյթ ա հաւատարիմ պատկեր նոցա արդի գրութեան, սակայն նկարագրուած բնագրի գործածութեան օգտակարութիւնն յունական գրերուն մէջ սպրդած անհամար տպագրական սխալներու պատճառաւ զնասուած է: Հետազօտութեան ընթացքին մէջ հիւսուած գրամագիտական և պատմական ծանօթութիւններն, իբրև միակ խոհուն փորձ եղեսական թաղարայ պատկերագրութեան լուսարանութեան և զանազան Արգարնի ի միմեանց որոշման համար, որժանի են կատարելապէս ուղղութեան):

J. Saint-Martin, Fragments d'une histoire des Arsacides, I (Paris 1850, 8) p. 103-162. (Եղեսական հին պատմութեան վրայ խորհրդածութիւնը, որոյ և առանց իսկ Մովսիսի խորնացու պատմածներուն անքննադատ կերպիւ ընդխառնումն՝ կատարելապէս անօգուտ է) :

W. M. Leake, Numismata Hellenica. Kings and dynasts (London 1854, 4.) p. 39-40. (Նկարագրութիւն այն գրամետրու ժողովածուն՝ որ ժամանակու կեմքրիի Fitzwilliam Museumին մէջ կը դանուէր) :

W. Scott, Notice of some royal coins of Mesopotamia. Numismatic Chronicle XVIII (London 1858, 8) p. 1-26. Pl. n. 1-6. (Առաջին հրատարակութիւն և ընթերցումն արամէական գրամոյ վերնագիրներու, հանգերձ պատմական մեկուսութեամբ, մի հաստատուն և հիմնադիր գործ) :

V. Langlois, Numismatique de l'Arménie dans l'antiquité. Paris et London 1859, 4. p. 48-82. Pl. IV-VI. (Իբրև գործ՝ ուր ամենէն բազմաթիւ գրամետրու պատկերներ կան ամենն ևս Cabinet de France էն. որով զիրքս առանց արժանեաց չէ, սակայն այնպիսի թեթևութեամբ յօրինուած, որ մինչև անգամ Սկոտին աշխատանքն աչքաթող արուած է. պատմական բաժիններն, որ հեղինակին մնացեալ մատենագրական գործոց կեպիտուն (diletantische) արկարն մույնել տալ անկարող են, անպէտք են գործադրութեան համար) :

A. Lipsius, Die edessenische Abgarsage, Braunschweig 1880, 92 SS. 8. (Առաջին անգամն քննադատօրէն հետախուզած է այս բազմաճիւղ լեզուն դական աւանդութիւնն և այս ճիւղիս մէջ կարգ մուցուցած, պատմականօրէն նշանաւոր է այն ապացոյցն՝ որ կը հաստատէ, թէ Արգարու լեզունդան ըստ մեծի մասին անգրագարձուած մի է վերջին Արգարու գարձին՝ ի սկզբան երրորդի գարու:

ԱՌԱՆԻՌԹԻԻՆ ԳԻՌՆԻՍԻՌՈՍ ՏԵՒԱ-ՄՕՂԲԵԱՅԻՈՅ
ԱՐԳԱՅԻՑ ԳՈՒՈՂԱՆԱԿԻՆՆ.

Գիոնիսիոս Տէլլ — Մահրեացուն արքայից գաւազանագրին :

Եզեհիլ թագաւորայ ցանկն աւանդուած է մեղ 776ին յօրինուած ժա.

մանակագրութեան մի մէջ, որոյ հեղինակն է Ասորին Գիոնիսիոս Տէլլ-Մահրեային, այս ժամանակագրութիւնն հանգերձ լատին թարգմանութեամբ

Ուղղօրդի և Գնեյբրի հրատարակուած է և ծանօթացուցուած առաւել ընդարձակ ընթերցող շրջաններու : Բայց որովհետև այդ թարգմանութիւնն իսկ և իսկ այս բաժնին մէջ սարգած բաղմութիւն սխալներու պատճառաւ անյարմար է նորանոր հետախուզութեանց հիմն ծառայելու, ուստի կը յուսամ աշխատակից հետախուզաց շնորհակալութեան արժանանալու, երբ աստ իմ բարեկամ Նէօլդեկէի 'ի վազուց հետէ ինձ հաղորդած թարգմանութիւն այս նշանաւոր զիւանագրոյն (Urkunde) հրատարակեմ : Աբրահամու տարեթուոյն այն տարիներն, որք եղեմից թագաւորներու շարին վերաբերեալ անցից հետ անմիջական յարաբերութիւն չունին, փակագիծներու մէջ դրած են, վասն զի այսպիսի դէպքերու անհնար է իմանալ թէ արդեօր այդ ժամանակակիցութիւնը մտատարու պէտ աւանուած են եթէ ճշդութեամբ :

Աբրայական դաւազանագիրն առաջին անգամ րատարակած է Յովհ. Ա. սէմանի, 'ի Մատենագր. արևելեան, Ա. 417. ապա Տուլբերգ Գիտնիօսիսի տպագրութեան մէջ : Երկուքին տարբերութիւններն անշուշտ չեն, և ես կաբէր համարեցի աստ կատարեալ հաւատարմեան հասնիլ : Պարսն ուսուցչապետն Իգնատիո Գուիդի 'ի Հռովմըս իւր սովորական բարութեան՝ յանձն առաւ իմ խնդրոյս համեմատ՝ այն բուր ան զերես կրկին բազմապետելու, ուր երկու հրատարակիչք կը տարբերէին : Այս բաղդատութիւնս կը հաստատէ Տուլբերգի աշխատութեան մեծ խնամքով կատարուած լինելն. բացառութիւն կը բազմեն միմիայն երկու սաւթք, ուրոնք մեծ արժէք ունին : Սակայն երբ Աստեմանի ձեռագիրս դործ կը գնէր, այն ժամանակ մատեանն առաւել բարւոք գրութեան մէջ էր : Չեաւ գրոյս այժմեան գրութեան վրայ ինձ Գուիդի հետեան ըկ գրէ. « վերջին ժամանակներս ձեռագրոյն Պետասուած թերթերն դժբախտաբար բուսական թվեթերով ծածկեր են, որով ձեռագրի-

րն բարւոք կը պահպանուի, սակայն ընթերցումն այդպիսով կրկնապատիկ կը գծուարանայ և անհաստատ կը գառնայ » : Եւր ձեռք մի ձեռագրոյն լուսանցից վրայ զանազան սեղերն ամբողջացուցեր է : Տուլբերգ, (էջ 68, 3), կ'ասէ առթիւ « հաղի թէ տարբերէն » : Այս յաւելուածներն ըստ յայտարարութեան Պ. Գուիդեյ՝ մասամբ Սերտու (Serta) և մասամբ ևս նմանեցուցած և տղեղ Էստրանգելա (Estrangela) ձեով են գրուած, իսկ յէջ 683. գրեւու առթիւ կ'ասէ, թէ նորա մի ձեւն միսն անցնող միջաձեւով և նոյն ձեւքով են գրուած : Այս լուսանցից ծանօթութեանց միայն (էջ 66, 8) առթիւ նա ևս նոյն յայտարարութիւնն կ'անէ ինչ որ Տուլբերգ. իսկ այդ ծանօթոյ թեանց վրայ ընդհանրապէս առաջիկանկատողութիւնս կը գրէ. « Հաստատու պէտ աքա շատ նորագոյն են քան ձեռագրոյն միւս մասերն, զիրն այն տղեղ Էստրանգելայի ձեւն ունի, որ մեք ամենանոր ձեռագիր մատենից վերնագիրներուն մէջ կը գտնենք : Ես մեծ գժուարութեամբ պիտի հաւենի սակելու, թէ այդ ծանօթութիւնք Աստեմանի ինքնին գրած է, սակայն կը կամիմ աստ այս իրիւ կասկած մի միայն յայտնել ե. ոչ աւելի ինչ » : Այս քանս կարելի է գոնեա հաստատել, որ Աստեմանի այս յաւելուածներս կը ծանաչէր : Ես կամի (բուրովին անհիմն կերպիւ) Արգար Բէ՛ կառավարութեան տարեթուներն փոփոխել, իսկ Մանու Ե՛ վարչութիւնը բոլորովին լուրթեամբ անգլափոխեր է, փոփոխած է նոյնպէս Աբրահամու տարին. այս դէպքերէս յայտնի կը տեսնուի որ այդ լուսանցից ծանօթութիւնք, եթէ Աստեմանի ինքն գրած է. ոչ եթէ իբրև իւր ռեպհական յարմարացուցումը (Combination) անդ գրուած է, այլ իբրև ուրիշ ձեռագրի մի տարբերութեան : Բայց յէջ 418, ո՞ VIII թվոյութիւն կը կոչէ բացարձակապէս զ'Իոնիօսիս 'ի լուսանցին (Dionysius in margina). ըստ այսմ այդ նոր ձեռագրի-

բըն հնագոյն էքան զԱստեմանի. և ուրովհետև վերջինն ըստ իւր սեպհական բանից (Bibl. Orient. II. 98) ձեռագիրս նախ ՚ի Մարեմայ վանա Սկետեսայ գտած է, և նա զի այս մասամբ յղատի ձեռագրի մի քերած գրերու վրայ գրած է, հետևաբար անշուշտ եզրագրաս է իւր հայրենիքն, ո ստի առաջին հայեացքէ կ'երևի թէ այս յաւելուած ներն Նիտրիական անապատի մի Ասորի արեղայի գործ է: Սակայն հնաբար է որ Աստեմանի արքայական գաւազանակրոյն արժանիքն հասկանալով՝ որ և է էւրոպացու ձեռքով յարեւել՝ ձեռագիրս ուրիշ օրինակէ, որ իւրեան անմատչելի էր՝ ամբողջաքննել տուած լինի: Ինչ ծագումն ևս կ'ուզեն թող աւեննան այդ լուսանցի լաւելուածք, նոցա մէջ բովանդակած վկայութիւնք, որոյ մասին միայն է

խնդիրն աստ, բարեբախտապար երկու արգարացուցիչ փաստեր յառաջ կը բերեն. նախ՝ ինն և տասներորդ թագաւորն ՚ի վկայաբանութիւնս սրբոյն Շարրիի (տա. Cureton, Ancient Syriac documents p. 41) Արգար եօթներորդ կը կոչուի ի իւր մի, որ միայն այն ժամանակ կը ճշգուի, երբ նորագոյն ձեռքին յիշած ութերորդ թագաւորն Արգար՝ Բար Արգար հաշուենք. երկրորդ՝ Մանուէ՞ վերայ տուած տեղեկութիւն մի գտնէ այնու կը հաստատէ, երբ սա ևս համաձայն վարդապետութիւնն առքեւոյն Ազգէի, էջ 32 (31), որ Մանու որդի Արգարու իւր հօր հետ միասին քրիստոնէութիւն ընդունած է կ'ասէ, ՚ի ժամանակագրութեան 2067 տարւոյն ներքոյ՝ Մանու մի որդի Արգարու կը յիշէ, իբրև նախորդ եօթնեակասնէրորդ թագաւորին:

ԱՐՔԱՅՅԻՑ ԳԱՒԱԶԱՆԱԿԻՐՆ ԸՍՏ ԹԱՐԿՄԱՆՈՒԹԵԱՆ ՆԵՕԼԴԵՎԷ

- Գիսնիսիտի ժամանակագրութեան, Արատարակուրիւն Տուրքերգի:
- Եր. 65. Յամին 1850 Արբահանու՝ թագաւորեց յեղեւիս առաջին թագաւորն Ռուհայ որդի Հեւեայ (Orhai bar Hevja) 5 տարի. և իւր անուամբ կոչեցաւ տէրութիւնս Ռուհայ, թագաւորութեանս սկիզբն է Ողիմպիակ 161ին և վերջն Ողիմպիակ 249ին:
- Եր. 66. [Յամին 1884.] (պիտի լինէր յամին 1888)¹. Այս տարւոյս թագաւորեց յեղեւիս Աբդու որդի Մալուայ (Abdu bar Mazur) 7 տարի:

- Յամին 1894 մեռաւ արքայն Եզեւիոյ և թագաւորեց Փրագառայ որդի Փրառու (Ph'radasht bar Gebard) 5 տարի:
- Յամին 1900 թագաւորեց Եզեւիոյ . . . (՚ի լուսանցին՝ Բակրու որդի Փրագառայի²) 3 տարի, և նորա յաճորդեց Բակրու որդի Բակրուի (Bakr^h bar Bakr^h), որ իշխեց 20 տարի:
- Եր. 67. [Յամին 1628]³ Եւ թագաւորեց յեղեւիս Մանու, 4 ամիս, և նորանից վերջն Արգար Պէխա (Peqa) 25 տարի և 9 ամիս:

¹ Դոյն իսկ այս տարւոյն մէջ են նշանակուած արտաբունն Պաղտմեսայ և անկուսն Սնտիքոսի, որ ըստ Հերոնիմեսայ 1886 Արբահանու կատարուած են:

² « Բառերս Բակրու որդի Փրագառայի ի լուսանցին նորագոյն ձեռքով Տուրքերգի « Բնագիրն պակասի » — կը գրէ ինձ Գալիզի — « Բաց տեղ չկայ. յաւելուածն դրուած է տեղի Սերտա (Serta) գրով, և որ տարօրինակն է՝ ոչ թէ միայն տեղի, այլ և այնպիսի բարակ տառերով, որ հազիւ

թէ՛ ըստ իս՝ յարեւիս գրուած լինի, այլ հաւանօրէն եւրոպական գրչով »:

³ Այսպէս ձեռագիրն ըստ Տուրքերգի, համաձայն Եւսեբեայ, որ ժամանակակից է, սկզբնաւորութիւն երկրորդ վարդապետն Պաղտմեսայ Ը՛ է այս տարւոյն մէջ կը գրուէ: « Թէ և ոչ ոք ըստ սղարդ չէ, սակայն կ'երևի հաստատապէս, որ մասեանս 1928 թիւն ունի » Գալիզի: Առեմանի 1918 թիւն անահանօրէն ուղղագրութեամբ:

Եւ Արգար սպանեց զԲահրու և իշխեց միայնակ 23 տարի և 5 ամիս : Եր. 68 [Յամին 1937]¹ (ի լուսանցին) Եւ թագաւորեց յԵղեւսիա Արգաբ որդի Արգարու 15 տարի² :

— Յամին 1960. Մեռաւ թագաւորն Եղեւսիոյ և Եղեւսացիք անիշխան էին տարի մի իշխանասիրական կռիւններու պատճառաւ : Ապա թագաւորեց նոցա Մանու, որ Ալահայ (Allâhâ) կը կոչուէր, 18 տարի և 5 ամիս :

— Յամին 1980. Մեռաւ Եղեւսիոյ թագաւորն և թագաւորեց Պաքուրի (Paquri) 5 տարի :

Եր. 69.) Յամին 1985 մեռաւ Պաքուրի և թագաւորեց Արգար 3 տարի. նո-

րանից վերջն թագաւորեց Արգար Սումմաքա (Soummâqâ) 3 տարի :

Եր. 71.) Յամին 1990. թագաւորեց Եղեւսիոյ Մանու, որ Մափուլ (Saphul) կը կոչուէր 18 տարի և 7 ամիս³ :

Եր. 114.) Յամին 2015 (ի լուսանցին). Մանու որդի Մանուայ 6 տարի⁴ :

Եր. — կը պակսի. Եր. 116 (ի լուսանցին). Մանու որդի (Արգարու) 7 տարի⁵ :

Եր. 117.) Յամին 2024. թագաւորեց Եղեւսիոյ Արգար Ռուկկամա (Uk-kâmâ) : որ արտաքսուած էր, 37 տարի և 1 ամիս :

Եր. 120.) Յամին 2067. Արգար արքայն Եղեւսիոյ նամակ մի ուղար-

թաւն կամայական կ'երևի» : Այն թէպէտ և 2019 տարեթուին առաջ գրուած է, սակայն կը պատկանի առանկապէս նախնւթաց թուին 2015 Արքայտանու :

5 Եր. 122. Տուլլերեզ. կը պակսի գոնէ թերթ մի 'ի ձեռագրէն, ուր Արք. 2050-2065 տարիներու պատահարներն պատմուած էին : Սաւէմանի կը գնէ Հետագայս « 2061 մեռաւ Արգար, թագաւորն Եղեւսիոյ, և թագաւորեց իւր որդին Մանու 7 տարի » : Տուլլերեզ կը նկատէ առ այս. « Quæ etiam in Cod. nullus inveni ». (զոր 'ի մատենին նոյնպէս ոչ գտի), սակէ է որ Աստեմանի այդ պակասորդն գուշակած է : Սակայն իրն բարորդին ուրիշ կերպ է, որու վրայ ինձ Գուրգի կը գրէ. « թերթ 25 (այն թերթին Հակատակ կողմն, որու առօրին երեսին վրայ Մանու Գն վերաբերեալ ծանօթութիւնն գրած է) ունի իւր լուսանցին վրայ խօսքեր՝ այնպիսի մի նշանով, որով իւրեանց տակն 'ի քնագրին Տուլլերեզի էլ 116, 1. 17 'ի մէջ վարչութեան սկսանկերն Արքեղայտու և երևուլն Յուզայ Գալիէանցոյ կ'ընկնի : Այս բառերս ինչպէս և առաջին երեսին վրայ եղածներն ևս խտրանջնայ գրոց նման զօթեամբ գրուած են » : Աստ կը Հետեի՝ որ Աստեմանի լուսանցոյ տեղադրուած թիւն մի արած է, Արքահամու տարին փոփոխած է և սկիզբի բառերն ազատորէն ամբողջացուցած է. Հայրական անունը թե՛րևս իւր ժամանակին իսկ անընթեռնի էր : Թերթի մի կորուսան, որ Հետեանք է կազմուել, պէտք է որ Աստեմանին առաջ և զած լինի :

1 Այսպէս ըստ Տուլլերեզի, որ Գուրգի կը ճշգէ. իսկ Աստեմանի 1944, որ ըստ Տուլլերեզի ևս կրնայ այդպէս կարգացուիլ, սակայն Հակատակն Եւսերայ, որ Պրուզոմէոս Եւստինիանոսի կողմէն վարչութեան սկիզբն 1937ին կը գնէ :

2 Ըստ Տուլլերեզի այն խօսքերն գրուած են նորագոյն և Հայեր թէ ասորի ձեռքով լուսանցին մէջ, առանց որ և է ցուցիչ մը չանի. այս կարծեաց ճշգրտեան կը վկայէ և Գուրգի, որ կը յայտելու թէ լուսանցի ծանօթութեանս մի մասն վատ յաջողուած է, անհաստատ նմանողութեամբ խտրանջնայ գրերի, միւս մասն Սերտա գրերով, ինչպէս լուսանցի բանքն յէլ 66 գրուած են. Աստեմանի այս յայտելուածն Արքահամու 1944ին է վերաբերեր :

3 Այսպէս Տուլլերեզ. Գուրգի կ'ասէ. « Մատեանն կերելի թէ 18 տարի և 7 ամիս ունի ». Աստեմանի 28 տարի և 7 ամիս կը գնէ, երեկ ուղղագրելով միայն :

4 « 2018 Արք. թագաւորեց Եղեւսիոյ Մանու-բար Մանու 6 տարի » : Աստեմանի, Առ այս Տուլլերեզ կը նկատէ. « Quæ miror me in Cod. non invenisse » (որուն կը զարմանամ թէ ինչպէս ևս այդ 'ի մատենին չեմ գտնիր). իսկ Գուրգի կը գրէ ինձ. « Արևելեան իմաստուններու պատմութեան վերջն գրած է 'ի մատենին ցուցական նշան մի, որ 'ի լուսանցին եղած բառից առաջ կը կրկնուի : Այս բառերս նորագոյն ձեռքէ են և խտրանջնայով են գրուած, Այսպէս կ'ընան որոշուիլ և ինչպէս կ'երևի և ոչ երբեք 'ի ձեռագրին եղած են. նոյնպէս և վերաբերուին ծանօթութեանս 2018

կեց Քրիստոսի յերաւազմմ.
Եր. 122.) Գամին 2067. Մեռաւ Մա-
նու որդի Աբգարու, արքայն Եգե-
սիոյ. և թագաւորեց իւր եղբայրն
Մանու 14 տարի:

Եր. 129.) Գամին 2081. Մեռաւ Մա-
նու, արքայն Եգեսիոյ և իշխանու-
թիւնն ձեռք ձգեց Աբգար որդի
Մանուայ 20 տարի:

Եր. 148.) Գամին 2101. Թագաւորեց
Եգեսիոյ Աբգար որդի իշխաւայ (I-
zat) 6 տարի և 9 ամիս:

— Գամին 2106 մեռաւ Աբգար ար-
քայն Եգեսիոյ, և իշխանաւորական
կռիւններու պատճառաւ անցաւ իս
Տնայն Եգեսայիք 2 տարի, և ա-
պա իշխանութիւնն 'ի ձեռնն առաւ
Իլիւր փառնադասպաա (Ilur Phar-
nataspat) 3 տարի և 10 ամիս:

Եր. 151.) Գամին 2113. Թագաւորեց
Եգեսիոյ փառնադասպաա 10 ամիս
և նորանից վերջն Մանու որդի Ի-
զաւայ 16 տարի և 8 ամիս:

Եր. 156.) Գամին 2154. Թագաւորեց
Եգեսիոյ Մանու որդի Մանուայ 24
տարի և զնայ Հոովմէացւոց եր-
կիրն:

Եր. 156.) Գամին 2154. Թագաւորեց
Եգեսիոյ Վալիլ Արդի Սահուռի (Sa-
hrá) երկու տարի, և նորանից վերջ
թագաւորեց Մանու որդի իշխաւայ՝
իւր հոովմէական երկրից վերա-
գառնայէն վերջն, 12 տարի: Իւր
թագաւորութեան տարիներու գու-
մարն առկայն է 36. առանց այն
տարիներն հաշուելու, որ նա Հոով-
մէացւոց երկրումն էր:

— Գամին 2169 Թագաւորեց Եգեսիոյ
Աբգար որդի Մանուայ, 35 տարի:

Եր. 159.) Գամին 2203. Եւ կ'իշխէր Ե-
գեսիոյ Աբգար Սեւերոս իւր որդուով
հանդերձ, տարի մի և 7 ամիս. իրով
վերջն թագաւորեց նորա որդին Մա-
նու 26 տարի:

Եր. 192.) Գամին 2232. Հեղեղ մի սեղը
ունեցաւ Եգեսիոյ մէջ այն դեռնն,
որ քաղաքին արևմտեան կողմէն 'ի
նեքս կը մտնէ: Այն դեռնն մէջ որ
Գայշան (Daigan) կ'անուանի՝ մեծ
տարափ թափեցաւ: Եւ մինչդեռ
իւրաքանչիւր սր կը քրնահան և հան-
գիտաւ և խաղաղ իւր տունն էր, հոսեց
դեռն մինչև եզերքներն լի (քաղա-
քին մէջ). իսկ արևելեան ստորալկց
վերեջնն այն բազմաթիւ նիւթերու
(փայտի, ազրի և այլն) թմրովն բբա-
նուեցաւ, որ ինքն լիւններէն և մեծ
ճանապարհներէն հեռն բերած էր,
այսպէս գարծաւ հոսանքն 'ի յեա-
ւ և մինչ ամէնքն անկողնումն էին և
քուն կը լինէին, մտաւ ջուրն տունե-
ներուն ներսը դռներէն և պատու-
հաններէն և մարդիկ հեղձան իրենց
մահիճներին մէջ. (Եր. 163) Եւ տու-
ներն՝ որ կրից և սկուռից շինուած
էին խոնաւացան և սրան և ծած-
կեցին իրենց տանակներն և գե-
րեզման եղան իրենց բնակիչներէ:
Այսպէս կատարեցաւ մարգարէու-
թիւնն որ կ'ասէ՝ « Գերեզմանք իւ-
րեանց են տունք իւրեանց 'ի յախ-
տեանս » 2: Եւ հեղձան անդ (հեղե-
ղին մէջ և կամ հեղեղով) 2000 է
աւելի մարդիկ և բազմաթիւ անա-
տունք: Բայց սրովհետեւ հեղեղին
ուժն սասաիկ էր պարսպին դէմ,
ուստի փլաւ ու յանկարծակի, կոր-
ծանեցաւ և ջուրէն ստարուեցաւ,
(իսկապէս՝ ջուրն առաջ քշեց և սաւ
րաւ): Իսկ ինքն (հեղեղաւն) յա-
ռաջ վարեց քաղաքն դերուած (բառ
առ բառ) և տարաւ ամենայն ինչ
դուրս՝ ինչ որ տարափն ծածկեր էր.
մարդոց և անասնոց զիականք, մեծա-
վեծ իրեր և փառասէղ կարտախր և
ամենայն՝ որ քաղաքին մեծամեծ
փողոցներին և խոնաթիւններին մէջ
կար: Տարաւ նոյնպէս պարտէզնե-
րն (դերուած) և աուներն և զիւղե-
րն, ամենայն ստացուածք որ իւր
առաջ և էին, այն է՝ ամենայն ինչ որ
Եգեսիոյ և խոսաննո գաղախն մէջ

1 Անշուշտ գրութեան սխալ մի է փո-
խանակ Մանու բար՝ Մանու բար իշխաւու:
2 Սաղմ. 49, 11. Նէոյդեկէ:

Կար յնարելի էր մինչև անգամ ետր դաժանկողինը տեսնել որ կը լողա յին. կը տեսնուէին երբեմն մինչև անգամ մարդիկ (տերերն) ասցա մէջ պտուկամ :

Եր. 163 [Յոմին 2233] Ասա վերջացաւ . և Եղեապոսոց թագաւորութիւնն , որ 352 տարի աւեւած էր , և եղան սորա հպատակ Հոսովմէացոց :

Գ Ի Ո Ւ Յ Ի Ո Ս Ի Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Գ Բ Ո Ւ Թ Ե Ա Ն Մ Է Զ

Թ Ա Գ Ա Ւ Ո Ր Ա Կ Ա Ն Գ Ս Ի Ս Զ Ա Ն Ա Գ Բ Ի Ս Ի Ո Ւ Ա Ն Ե Ր Ո Վ Զ Ե Տ Ե Գ Ո Ւ Ի Լ Ն

Քաղաքներէ վարչութեանց ժա մանտններն երբեմն ապրիներով և ա միաներով , երբեմն ամբողջ տարիներով են նշանակուածս Արգէն աստի իսկ կը հետեի՝ որ մեր ունեցածն թագաւորու կան կուսնին մի չէ կարգը լինելէ : Աւաւ և կը պայժամ լինաներու գումարն կը կողմնն 5 տարի և 2 ամիս , և չնայելով այն անուշադիր կերպին՝ որով արքայական քուստը անուկին Արրահամու քաղաք թուին յարմարցուցած է և այսքան կը հետեի հաստատապէս , որ այս թիւն ես միտանը հաշուելու է , որպէս զի ընդհա նուր գումարն 352 տանանք : Յիշեալ անուշադրութիւնն պատճ յառաջ կու գայ , որ վարչութեանց փոփոխումն յա ճախ 1-2 տարի փաղազոյն և կամ առաւել ուշ գրուած են . երբեմն սխալին հա մանտն հաշուած է դէպ ՚ի յառաջ մին չի որ սխալն նկատուած և ուղղած է , որ մէ ետքը չուտով ուրիշ սխալ մի թերեւ հակառակ ուղղութեամբ յառաջ եկած է : Ուրիշ ծագումն ունին Արգար Ա՞ և Մանու Եր ժամանակ հանդիպած մեծ իտտորութիւնն : Ինչպէս Արգար Ա՞ վարչութեան սկզբնաւորութիւն 1928 թուին համարելուն , նոյնպէս և նորս միահեծան վարչութեան 1937 Արգար գնելուն մէջ շտաբումն մի կայ՝ Արգար Բ՞ հետ : Առաջին դէպքում Արգար Բ՞ հնդկատանաւանայ վարչութեանն փոխանակ քաղնէ չինդապնայէն , որ Արգար Ա՞ վարչութեան ընդհանուր տար ընթացին կը պատկանի սխալմամբ յիտ մէ հաշուած , իսկ երկրորդ դէպքումն յի ր 23 վարչութեան աստիներին վերջին

կէան սխալմամբ Արգար Բ՞ մահուան տարին է համարած , փոխանակ իւր իսկ մահուն . — սխալներ՝ որ նաև նորագոյն ձևապրոցն հաւատարիմ լինին կ'աղա ցուցանեն , իսկ եթէ Մանու Ե՞ վարչ ւութեան սկիզբն Արրահամու 2020 տա րվ թուոյն տակ (կամ առաւել ճիշդն առ լով զլինի 2020 և նախ 2022) Մանու Գ՞ և Արգար Ե՞ մէջնակն նշանակած է , թէ և նպատարուն հասնող տեղ չկայ անդ : Ուստի և Առեմանի այդ սխալա նոյն պարթստուն առ երկոյթս իրաւամբ գտած է անզատութեան մի մէջ , և զնա բնագրին մի անզատութեան կիր արութեամբ , որ Արգար Ե՞ վերջը 2067 թուին մեռած Մանու որդի Արգա րու կը յիշէ , կրկին իւր տեղն , այսինքն այս վերջին Արգարէս յետոյ գրած է : Եթէ անգամ մի այսպիսի անզատութու թիւն եղած էր , այնուհետև տարե թիւն 2020 (Ճշգրտոյն 2021) Արգար Ե՞ իրել սորա վարչութեան սկիզբն ինք նին կը ներկայանար , փասն զի նախըն թաց թագաւորին Մանուի Գ՞ վարչու թեան սկիզբի պարիէն , որ մերձաւո ըտպէս 2015 թիւն էր , պարզապէս դէպ ՚ի յառաջ կը հաշուէր նորս 6 վար չութեան տարիներն դումարելով՝ Եր ք մուտքուտեղ այսպիսի ձևէն ամենա պարզ կերպի կ'երեւի , որ տարեկո թիւնը հաշուելով գտնուած են , որ վար չութեանց տարեթուերի գումարելումն եղած է . առ առանկն կարելիութիւն մի կայ՝ որ այն մարդն որ այս հաշիւնն ըրա կ'անէր , քանի մի հաստատուէ կէ տեր առաջն տնէր : Յ. յայտիտի համար .

առութեան օգուսն մեզ համար գլխաւորապէս այն է, որ մեզ ճշդութեան միջոց մի կը ներկայացնէ յառաջացած գրչի սխալանաց համար եւ իւրաքանչիւր առանձին տուած թուերուն առաւելագոյն հաստատութիւն կու տայ: Եթէ ընդհանուր դումարն տարիների՝ 342 տարի եւ 2 ամիս միայն կ'ենէ, այն ժամանակ դումարելով կը տեսնուի ան, միջապէս որ սխալն գումարանակիրին մէջ տեղն՝ Մանու Գ^Յ վարչութենէ վերջն է ետեղի ունեցած: Աստեմանի կ'ուղէր սորա վարչութեան տարեթիւն 18 տարի 2 ամիս բարձացնելով ուղղել, բայց որովհետեւ Աստեմանիէն սխալ հասկացած յաւելուածն Արգար Ե^Յ մօտ, «որ արտաքաւառ էր» սորա նախընթաց վարչութիւն մի ենթադրել կու տայ, ուստի պատշաճ է Ղէմմայի մի 'ի բաց անկումն « Արգար Ուկկումս 10 տարի » Մանու Գ^Յ եւ Մանու Դ^Յ մէջ տեղն ընդունիլ: Ժամանակագրութիւնն վերջաւին այնպէս կարգի դնել կոմենալով, ինչպէս Դիոնիսիոս իրեն առաջն

եղած դաւազանակիրն հիման վերայ մեզ ներկայացնելու պարտական էր. մեկը առած եմք էդեսացիներէց 'ի կիր առնուած Սելևկական տարւոյն մէջ տեղն, այն է՝ դարունն իբրեւ ելից կէս, այսու շուգնք ամենին կարծեցընել թէ մեք այդպիսով բոլորովին սկզբնականն դտած եմք. ընդ հակառակն այս տեղ մի միայն յարաբերական (conventionelle) ժամանակագրութեան մասին կարող է խօսք լինել. այլ վասն զի այդպիսով տարբերութիւնն բացարձակապէս յիշուած Արքահամու թուէն ոչ երբեք 2 տարիէն կ'անցնի, ուստի եւ ժամանակագրին կարծիքն ոչտու ամենաճիշդ կերպիւ տուած կ'երեւինք: Ոչ մի պատճառ չկայ ուրիշ վերածման եղաւ նուկ մի ընդունելու, քան եթէ սովորականն, ըստ Էւսեբեայ, ըստ որոյ Արքահամու թուէն 2017 տարիներն պէտք է հանել Գրիստոսէ առաջ եղած տարեթուերն զանելու եւ 2016 Գրիստոսէ զկնի թիւերն ստանալու համար:

Յ Ո Ւ Յ Ա Կ Ե Գ Ե Ս Ի Ո Յ Թ Ա Գ Ա Ի Ո Ր Ա Յ

Ուղղագրութիւն Դիոնիսիոսի համադրութեան

	Ս. Գ.	Բ. Ս. Գ. Ե.	Ու. Գ.	Ե. Գ.
1. Ուռհայի Բար Հիվյա [Orhâi-bar Hevjâ]	5	»	1880	1880 Կ 137
2. Արչու բար Մապուռ	7	»	1884	1885 Կ 132
3. Փրագաշտ բար Գեբառու	5	»	1894	1892 Կ 125
4. (Բակրու Ա. բար Փրագաշտ)	3	»	1900	1897 Կ 120
5. Բակրու Բ. բար Բակրու, միայն	17	4	—	1900 Կ 117
6. Բակրու Բ. Մանու Ա ^Յ հետ միասին	—	4	(1928)	1917 Կ 100
7. Բակրու Բ. Արգար Ա Պիքայի հետ միասին	2	4	—	1917 Կ 100
Արգար Ա. միայն	23	5	(1937)	1920 Կ 97
8. (Արգար Բ. բար Արգար Անիշիւսնութիւն	15	5)	?	1943 Կ 74
Անիշիւսնութիւն	4	—	1960	1958 Կ 59
9. Մանու Բ. Ալլահա	18	5	—	1959 Կ 58
10. Պաբուրի	5	—	1980	1978 Կ 39
11. Արգար Գ.	3	—	1985	1983 Կ 84
12. Արգար Դ. Սումմարա	3	—	—	1986 Կ 81

	Ս.Պ. Ս.Պ.	Բ.Սերբի	Ռ.Պ.Ղ	Ն.Ք.
13. Մանու Գ. Շափրուլ	18 7	1990	1989	» 28
14. (Աբգար Ե. Ուկկամա	10) -	—	2007	» 10
15. Մանու Գ. բար Մանու	6 -	(2015)	2017	» 1
Աբգար Ե. Ուկկամա, Երկրորդ անգամ	37 1	2024	2023	» 7
16. Մանու Ե. բար Աբգար	7 -)	(2020)	2060	» 44
17. Մանու Զ. բար Աբգար	14 -	2067	2067	» 51
18. Աբգար Զ. բար Մանու	20 4	2081	2081	» 64
19. Աբգար Է. բար Իզատ	6 9	2101	2101	» 85
Անիշխանութիւն	2 -	2106	2108	» 92
20. Իլուս ֆառնադասփատ	3 10	—	2110	» 95
21. ֆառնադասփատ	- 10	2113	2114	» 98
22. Մանու Է. բար Իզատ	16 8	—	2115	» 99
23. Մանու Ը. բար Մանու	24 -	2130	2131	» 115
24. Վայիլ բար Մահու	2 -	2154	2155	» 139
Մանու Ը. Երկրորդ անգամ	12 -	—	2157	» 141
25. Աբգար (Թ) բար Մանու, միայն	35 -	2169	2169	» 153
26. Աբգար Սեւերոս և Իւր որդին	1 7	(2203)	2204	» 188
27. Մանու (Թ) բար Աբգար	26 -	—	2206	» 190
Վախճան թագաւորութեան		2233	2232	» 216

Գումար . - 27 թողաւորք, 352 ամբ, 2 ամիս :

Շարունակելի

Թարգմանեաց

Ն. Ք.

Ս. Ռ. Ս. Կ

Երթոյնն երկու անդիկնսք 'ի վաճառ, և մի նրն յառ քանն ունէր 'ի հետն, և իմացաւ որ ընկերն շարակնութեամբ հոյէր յիջն և 'ի սիրտն նենգէր: Դնացին 'ի յայն վայր՝ վայրի տեղ մի, ուր օթեանք առնէին, և այն որ բզգանն ունէր՝ կու երկընդէր յընկերէն. գրին զգլինին՝ որ 'ի քուն լինէին: Յարեաւ ընկերն դադառ, և էր գիշեր. առ մեծ վէճ մի, մեկնեաց, իւ էառ դգթամ մի, և արար դրուիս յիւր տեղն, և իւքն զարտ 'ի զատ ելաւ՝ տեսանէլ զայն նենգաւորն թէ՛ զինչ կամէր գործել: Ելաւ նա 'ի մէջ գիշերին, էառ մեծ քոր՝ որչափ կարաց, և

իջաւ 'ի վերայ դգմին, գիտաց թէ ընկերոյ՞ զրուխն էր. նայթեաց դգումն և շրջնցաւ Յայն ժամ նայնեաց անդիկնսն. « Ահա, անհաւատ ընկեր, զքո անհաւատութիւնդ 'ի դգումն փորձեցի ». և փախեաւ 'ի նմանէ: — Յուցանէ առակս թէ Աստուած օգնական է մարդոյն, բայց պատրաստ կենան պահէ. զի Աստուած իմաստութիւն է տուեալ մարդոյն՝ ապա զմարդն՝ զոր փորձեալ ես 'ի սակաւ իրս. 'ի բան և 'ի դործ, որ ինքն վնասակար է և նենգաւոր և անհաւատ, դուն յիւրմէն պատրաստ կեցիր:

ՈՍԿԻՓՈՐԻԿ